Հավելված
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ ռեկտորի
24 մայիսի 2021թ. N 120 հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հետ կապված հարաբերությունների կարգավորումները:

2.Սույն կարգի նպատակն է համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց մտավոր կարողությունների, անհատականության, տաղանդի եւ ստեղծագործական մտքի զարգացումը՝ անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունն ու մատչելիությունը ապահովելու միջոցով:

3. Համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական ներառման նպատակով սույն կարգին համապատասխան իրականացվող միջոցառումները միտված են բարենպաստ միջավայրային գործոնների ստեղծմանը, միջավայրային արգելքների հաղթահարմանը:

4. Համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հետ կապված գործառույթները համակարգվում են համալսարանի

ռեկտորի 2021 թվականի մայիսի 21-ի N 118-Ա հրամանով ստեղծված սոցիալական ներառման հարցերով զբաղվող խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կողմից:

5. Խորհուրդը պարբերաբար իրականացնում է դիտարկումներ և հաշվառում է համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց, վերհանում է նրանց կարիքները և գնահատում:

6. Համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման նպատակով խորհուրդը հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ստեղծման, իրազեկության բարձրացմանն ուղղված և այլ գործընթացների ապահովման նպատակով մշակում է գործողությունների և միջոցառումների պլան և համապատասխան առաջարկություններ է ներկայացնում համալսարանի ռեկտորին:

7. Համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց համար այլ միջոցառումների հետ միասին կազմակերպվում են առողջ ապրելակերպի վերաբերյալ կարճատև դասընթացներ և իրականացվում են համապատասխան մարզումների:

8.Համալսարանի ակադեմիական կազմի անդամները մշտապես մանկավարժահոգեբանական աջակցություն են ցուցաբերում Համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց և նպաստում նրանց սոցիալական ներառմանը:

9. Խորհուրդը սույն կարգին համապատասխան գործառույթների իրականացման նպատակով ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն համալսարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներից:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները և աշխատողները խորհրդին են տրամադրում պահանջվող տեղեկատվություն, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր:

Ռեկտոր՝ Դ.ԳԱԼՈՅԱՆ